

## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

## ՆԱՀԱՆՁ

կան նոր կարօտներ եւ նոր յոյզեր կան,  
նոր բաղձանքներ կան դիռ ինձ անձանօթ,  
Որ վառ գոյների նոր ծիածանով  
Գօտեւորում են իմ անող ներկան :

Տեսնում եմ արդէն երգերը չերգած՝  
Դրօշնիրի պէս հեռում ծածանող,  
Նրանք դաշնում են հոգերուխ ծայնով  
Իմ նոր յոյզերի քայլերզը զնզան ...

Ես եմ նրանց դէմ սիրտս բաց անում  
Որ տիրեն յոյզերն այն նոր աշխարհի՝  
Խմաստաւորուած մեղնով, ինձանով ...

Այդ տիրապետման յաղթական պահին,  
Իմ ներաշխարհի մի խուլ կածանով  
Նահանջում են իմ կարօտները հին :

## ԿՈԹՈՂ

Ժամանակի մէջ անվերջ՝ կա մի օր,  
Եւ երկրացնդի վրայ կայ մի վայր,  
Որ ամէն ազգի ու մարդու համար  
Մնում են պայծառ եւ ընդիմշտ անմո :

Կարգեղոնը կայ, Յոյնի, ահաւոր  
Վերդենը՝ Գալլի համար սրբավայր,  
Եւ կայ մեզ համար դաշտը Աւարայր,  
Տղմուտ, Վարդանանց փառքը դարաւոր:

Իսկ այս երկրացունց երկունքն արնահեղ  
Ուր մարտնչում են անթիւ ազգ ու ցեղ  
Ուր եւ ո՞ւմ պիտի բարձրացնի կոթող:

Ո՞ւր էլ որ լինի, հայրենի՛ք իմ միծ,  
Քո զաւակները, գիտեմ, անյողդողդ  
Կը զնեն այնտեղ կնիքը իրենց



## “ՅԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՀ,,

Դու ես անցել, Վիշապաքաղ,  
Դու ես անցել, Վահագն արի,  
Այս երկնքից աստեղակախ  
Հեծած նրժոյզըդ վիթխարի :

Ո՞վ է ասում յարդ ես թափել,  
Ու դիւցազն ես դու յարդազող ...  
Դու դիւցազն ես արեգնաբեր՝  
Վիշապի ուժը խորսակող :

Ի՞նչ «ճանապարհ յարդագողի»  
Սատղերի մէջ սուրբ ու մաքուր.  
Դա հետքն է քո ոտակոլիի,  
Ցոլքն է զէնքի քո սայրասուր :

Դա կայծերն են սմբակների  
Կայծակնատոյր քո Պեղասի ...  
Վիշապաքա՛ղ, դու մի ների՝  
Քեզ «յարդագող» թէ մէկն ասի:

Հերոս արդար, դու յաղթեցիր  
Մեր աշխարհի չարն ամբարիշտ .  
Քո արշաւի հետքն աստղացիր  
Մեր երկնքում թող մնայ միշտ :

«ԳԻՐԸ ՔՆԱՐԱԿԱՆ»

Գ.Ռ.ՋՈՒՐՇՈՒԿ ՆԱՐԵՆՑ